ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Հոդված 49. Արժութային կարգավորում
(վերնագիրը փոփ. 23.10.01 ՀՕ-243)

1. Կենտրոնական բանկը սահմանում է արտարժութային գործառնությունների իրականացման, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը:

2. Կենտրոնական բանկն իրավունք ունի՝

ա) սահմանել արժութային գործառնությունների իրականացման կարգն ու պայմանները, ընդունել արժութային գործառնությունները կարգավորող որոշումներ և կանոններ.

բ) հսկել և կարգավորել արժութային գործառնություններ իրականացնող ~~դիլերների-բրոքերների, ներառյալ~~ բանկերի, գործունեությունը.

գ) սահմանել ~~արժութային դիլերների-բրոքերների, ներառյալ~~ բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրողների, արտարժույթի տնօրինման նորմատիվը.

դ) սահմանել հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի որոշման մեթոդները.

ե) իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: